ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

## ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 9 մարտի 2015թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Պետրոսյանի
Անդամակցությամբ՝ Վ. Հովհաննիսյանի
Հ. Նազարյանի

Ուսումնասիրելով քաղաքացի Լաուրա Մկրտչյանի
անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

**Պ Ա Ր Զ Ե Ց.**

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացի Լաուրա Մկրտչյանը դիմել է ՀՀ սահմանադրական դատարան (դիմումը ՀՀ սահմանադրական դատարան է մուտքագրվել 2015 թվականի փետրվարի 24-ին)՝ խնդրելով.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ մասը, 158-րդ հոդվածի 3-րդ եւ 5-րդ մասերը եւ 160-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերը ճանաչել ՀՀ Սահմանադրության 18, 19, 20 եւ 42-րդ հոդվածներին հակասող եւ անվավեր:

Ըստ դիմողի՝ վիճարկվող դրույթների առկայության պայմաններում նա զրկված է հանցագործությամբ իրեն վնաս պատճառելու հետեւանքները վերացնելու համար վճռաբեկ բողոք ներկայացնելու իրավունքից, քանի որ առկա է օրենքով նախատեսված իրական արգելք, որը խոչընդոտում է դատարանի մատչելիությունը:

Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով եւ ելնելով խնդրո առարկա անհատական դիմումի եւ կից փաստաթղթերի նախնական ուսումնասիրության արդյունքներից, գտնում ենք, որ դիմումի հիման վրա գործի քննությունը սահմանադրական դատարանի կողմից ենթակա է մերժման հետեւյալ պատճառաբանությամբ.

**1) ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ մասի առնչությամբ.**

ՀՀ սահմանադրական դատարանի 2015 թվականի մարտի 3-ի ՍԴՈ-1192 որոշմամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ մասը ճանաչվել է ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածին, 18-րդ հոդվածի 1-ին մասին, 19-րդ հոդվածի 1-ին մասին հակասող եւ անվավեր՝ նկատի ունենալով, որ տվյալ դրույթի կիրառումն առկա իրավակարգավորումների պայմաններում սոցիալական անհամաչափ ծանրաբեռնվածություն է առաջացնում անձանց համար՝ կախված նրանց ֆինանսական հնարավորություններից, չապահովելով նաեւ անձի արդար դատաքննության, դատական պաշտպանության արդյունավետ միջոցի եւ դատարանի մատչելիության իրավունքների լիարժեք իրացումը, ինչը, որպես գործի քննությունը մերժելու հիմք, ամրագրված է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետով,

**2) ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 5-րդ մասի առնչությամբ.**

ՀՀ սահմանադրական դատարանի 2015 թվականի մարտի 3-ի ՍԴՈ-1192 որոշմամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 5-րդ մասը ճանաչվել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող՝ ՍԴՈ-1192 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում, ինչը, որպես գործի քննությունը մերժելու հիմք, ամրագրված է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետով,

**3) ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 3-րդ մասի եւ 160-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի առնչությամբ.**

- խնդրո առարկա անհատական դիմումն ակնհայտ անհիմն է: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27 եւ 28-րդ հոդվածներով նախատեսված են իրավասու սուբյեկտների կողմից սահմանադրական դատարան հասցեագրված դիմումներին ներկայացվող ընդհանուր պահանջները, դիմումին կցվող նյութերի շրջանակը, իսկ անհատական դիմումի ընդունելիության հավելյալ պարտադիր պայման է նույն օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջը, համաձայն որի՝ դիմումը պետք է պարունակի նաեւ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ: Ավելին, ՀՀ սահմանադրական դատարանը 24.11.2009թ. ՍԴՈ-839 որոշման մեջ արտահայտել է իրավական դիրքորոշում, ըստ որի՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասն ամրագրում է վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ ներկայացնելու՝ դիմողին ներկայացվող պահանջը, համաձայն որի՝ վիճարկվող օրենքի դրույթի հակասահմանադրականությունը պետք է հիմնավորված լինի հիշյալ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասում նշված որեւէ հատկանիշով: Անհատական դիմումին ներկայացված այս պահանջը նշանակում է, որ դիմողը պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե իր սահմանադրական որ իրավունքներն են խախտվել եւ ինչ անմիջական պատճառահետեւանքային կապ է առկա վիճարկվող դրույթի եւ իր իրավունքների խախտման փաստի միջեւ: Խնդրո առարկա դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ առկա չեն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջներին համահունչ իրավաբանորեն ձեւակերպված հիմնավորումներ, ինչպես նաեւ դիմողը չի հիմնավորել իր սահ-

մանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի եւ վիճարկվող դրույթների հակասահմանադրականության միջեւ պատճառահետեւանքային կապի առկայությունը.

- դիմողը ձեւականորեն վիճարկելով օրենքի դրույթների սահմանադրականության հարցը՝ ըստ էության բարձրացնում է այդ դրույթների կիրառման իրավաչափության հարց: Համաձայն ՀՀ սահմանադրական դատարանի՝ 17.03.2009թ. ՍԴԱՈ-21 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշման՝ «...բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձեւականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց կամ հետապնդում է այլ նպատակներ, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ»:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին, 3-րդ եւ 6-րդ կետերով, ինչպես նաեւ 69-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

**Ո Ր Ո Շ Ե Ց.**

Քաղաքացի Լաուրա Մկրտչյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

**Նախագահող՝**

**Անդամներ՝**

9 մարտի 2015 թվականի
ՍԴԳԿՈ/ 1-10